



«Տելեկոմ Արմենիա» – Կայուն զարգացման հետ կապված (ԿԶԿՊ) պարտատոմսեր

Երկիր՝	Հայաստան
Ծրագրի համար՝	55906
Գործունեության ոլորտ՝	Հեռահաղորդակցություն, մեդիա և տեխնոլոգիա
Ծանուցման տեսակ՝	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա՝	Բ
Կարգավիճակ՝	Հաստատված

Ծրագրի նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է 13,5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրում՝ «Տելեկոմ Արմենիա» ընկերության կողմից 75 միլիոն ԱՄՆ դոլարի չափով կայուն զարգացման հետ կապված պարտատոմսերի (SLB) թողարկումով, որոնք հրապարակայնորեն կցուցակվեն Հայաստանի ֆոնդային բորսայում:

Ծրագրի նպատակներ

ՎԶԵԲ-ի ներդրումը կօժանդակի կայուն զարգացման հետ կապված պարտատոմսերի (SLB) թողարկմանը, որոնցից ստացված միջոցները կօգտագործվեն «Տելեկոմ Արմենիա» ընկերության գոյություն ունեցող պարտքը վերաֆինանսավորելու և աճին միտված կապիտալ ծախսերի ծրագիրը ֆինանսավորելու նպատակով՝ օժանդակելով ընկերության գործառնական և ֆինանսական կայունությանը:

Անցումային գործընթացի ազդեցությունը

ETI: 66

Դիմակայուն – Ծրագիրը կնպաստի ֆինանսական դիմակայությանը և կապիտալի տեղական շուկաների զարգացմանը Հայաստանում՝ օժանդակելով կայուն զարգացման հետ կապված պարտատոմսերի (SLB) թողարկմանը:

Կանաչ – Ծրագիրն օժանդակում է հավակնոտ բնապահպանական կատարողականի հիմնական ցուցանիշերի (KPI) և կայուն զարգացման թիրախային ցուցանիշերի ապահովման իմաստով «Տելեկոմ Արմենիա» ընկերության հանձնառությանը, որոնք համապատասխանեցված են Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի (ICMA) կայուն զարգացման հետ կապված պարտատոմսերի (SLB) սկզբունքներին, որը հաստատվում է «Sustainalytics»-ի Երկրորդ կողմի եզրակացության (SPO) շրջանակներում:

Հաճախորդի մասին տեղեկատվություն

«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն («Տելեկոմ Արմենիա» կամ «Ընկերություն») հանդիսանում է ֆիքսված և բջջային հեռահաղորդակցության ծառայությունների մատուցողը Հայաստանում:

ՎԶԵԲ ֆինանսավորման ամփոփագիր

13,500,100.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեք

75,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական հարցերի ամփոփագիր

Դասակարգվում է որպես Բ կատեգորիայի ծրագիր (Բնապահպանական և սոցիալական պատասխանատվության քաղաքականություն, 2019թ.): «Տելեկոմ Արմենիա» գործող հաճախորդ է, և նրա բնապահպանական և սոցիալական (E&S) արդյունքները նախորդ ծրագրերի շրջանակներում եղել են գոհացուցիչ: Կայուն զարգացման պարտատոմսերի (SLB) թողարկման հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները ցածր են և կկառավարվեն Բնապահպանական և սոցիալական գործողությունների վերանայված ծրագրի (ESAP) միջոցով, որը համահունչ է միջազգային լավագույն փորձին և Բանկի կատարողականի պահանջներին: Բանկի՝ Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության շրջանակներում քննության առնվեցին «Տելեկոմ Արմենիա» ընկերության Բ և Ս կառավարման համակարգը, տարեկան հաշվետվությունները և Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ESAP) իմաստով առաջընթացը՝ հաստատելով կատարողականի պահանջներին համապատասխանությունը: Ընկերությունն իր կազմակերպչական կարողություններն ամրապնդել է՝ բնապահպանական և սոցիալական պատասխանատվության հարցերով փորձագետ նշանակելով, և շահագրգիռ կողմերին ներգրավման, բողոքարկման մեխանիզմների և կապալառուի կառավարման հոլսալի քաղաքականություններ պահպանելով: Առողջությունը և անվտանգությունը (H&S) շարունակում է առաջնահերթ լինել, պարտադիր վերապատրաստումով և ISO 39001-ին համապատասխան երթևեկության և ճանապարհային անվտանգության պլանի մշակումով:

Բնապահպանական և սոցիալական գործողությունների վերանայված ծրագիրը (ESAP) ներառում է գործողություններ՝ շահագրգիռ կողմերի ներգրավումը խթանելու, երթևեկության անվտանգության և Բ և Ս տվյալների հրապարակման համար: Բանկը Ծրագիրը կմշտադիտարկի տարեկան զեկույցների, Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի իրականացման և անհրաժեշտության դեպքում տեղամասեր այցելությունների միջոցով:

Տեխնիկական համագործակցություն

Ծրագիրը կներառի տեխնիկական համագործակցության հանձնարարական՝ կենտրոնանալով «Տելեկոմ Արմենիա» ընկերության ցանցի դիմակայությունը բարձրացնելու վրա, որը ֆինանսավորվում է ՎՉԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից:

Յուրօրինակ ներդրում

ՎՉԵԲ-ը հավելյալ արժեք կապահովի՝ օժանդակելով Ընկերության կողմից պարտատոմսերի առաջին թողարկմանը, ինչը հնարավորություն է տալիս Հայաստանում առաջին անգամ թողարկել Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի (ICMA) պահանջներին համահունչ կայուն զարգացման հետ կապված պարտատոմսեր (SLB) և ճանապարհի հարթելով ԵՄ-ՎՉԵԲ Կապիտալի շուկաներին աջակցության ծրագրի շրջանակներում կայուն ֆինանսավորման լուծումների համար: Այն նաև նպաստում է

գենդերային հավասարության բարելավմանը գենդերային գործողությունների ծրագրի և մարդկային ռեսուրսների քաղաքականության բարելավման միջոցով:

Ընկերության կոնտակտային տվյալներ

Թիմ Տելեկոմ Արմենիա

Արփինե Չալկյան

+37495988723

Arpine.chalkyan@teamgroup.am

Ազատության պող. 24/1, 0014, Երեւան, ՀՀ

www.telecomarmenia.am

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՉԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՉԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՉԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՉԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները

պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները ոլորացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՁԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՁԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍԸ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՁԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետևերդրումային փուլերում:

ՀՎՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՁԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀԶ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀԶ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՉԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՅԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ Էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: